ՄԱՆԱԿ. Անյայտ։ Հաւանօրէն ԺԳ. դարու ձեռագիր։ Երկրորդ ստացողներն են Յովհաննէս քահանայ և իւր եղբայրը Սիմէոն «Թվ. Հայոց ՊԴ»=1355 թ։

Նկարուած է 127ա. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

116. Մատ. Ս. էջմ. № 530/500 (Կ. 517), Ընդհանրական Ներսիսի Շնորհալւոյ և այլ դաւանաբանական թղթեր։ Թուղթ, 431 թերթ։ ԳԻՐ. բոլորգիր. ԳՐԻՉ. Վարդան՝ ամբողջի համար, բայց այստեղ տալիս ենք միայն Գրիգոր Անաւարզեցու ձեռքը։ ՍՏԱՑՈՂ Գրիգոր կաթուղիկոս (Անաւարզեցի). «Զերջանիկ կաթուղիկոսն զտ՛ր Գրիգոր ստացող գր" յիշեցէք աղօթիւք ի ք՜ս, այլ և զՎարդան գր". 209ա. տես 230բ.։ ԺԱՄԱՆԱԿ. Ուղարկուած է կաթուղիկոսի կողմից նուէր Գլաձորի նշանաւոր վարժապետ Եսայի վարդապետ Նչեցուն «ի թվիս ՉԾԴ», 1305 թ. Փրկչական. տես նկարը, Տախտակ ՀՁ։

117 Մատ. Ս. էջմ № 159/182 (Կ 153)։ Աստուածաշունչ. թուղթ, սկզբում տեղտեղ մագաղաթ, 24×16,2 սմ., 735 թերթ։ ԳԻՐ. Բոլորգիր, երկիջեան $22\frac{1}{2}\times 6$ սմ.։ ԳՐԻՉ. Մարտիրոս վարդապետ՝ աշակերտ Գէորգ Լամբրոնացու. 318ա. «Զմարտիրոս վարդապետ աշակերտ Գէորգեայ (Ս)կեռացւոյ (նաև Լամբրոնացի կոչուած), զգրաւղ գրոցս յիշեցէք ի տր"։ ՏԵՂ. «Դրեցի զսա ի վանքս հռչակելի, որ Գոներ կոչի, մերձ ի Բարձրն կոչեցեալ բերդ». «յանապատս Խաչատրոյ ի վերայ գետոյս Շղրկայ»։ ԺԱՄԱՆԱԿ 1303—1306 թուերին՝ հետզհետէ գրելով։

Նկարուած է. 185ա. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

118. Մատ. Ս. էջմ. № 153/177 (Կ. 147). Աստուածաշունչ. Մագաղաթ, լաւ 25,1×18,6 սմ., թերթ 609, բուն գրչինը 595։ ԳԻՐ. բոլորգիր, երկէջ, $19,8\times 6\frac{1}{2}$ սմ։ ԳՐԻՉ. Մովսէս (Երզնկացի)։ ՏԵՂ. Կարծում եմ գրուած է Կիլիկիայում և ապա նուիրած «զամբարանի ս՜բ Լուսաւորչին», «ի լերինս Սեպուհ, ի Մանիա յայրսն»։ ԺԱՄԱՆԱԿ ԺԳ. դարու վերջերը կամ ԺԴ.-ի սկիզբը։

Նկարուած 202ա, բնագիրն ու մեր նկարը նոյն մեծութեամբ։

119. Մատ. Ս. էջմ. № Գ. 21×3722. Աւետարան, նկարազարդ, թուղթ. 33×27 սմ., 362 թերթ։ ԳԻՐ. Հաստ և խոշորատիպ բոլորգիր, երկէջ, առանց ծանօթ. 1,22×8 սմ.։ ԳՐԻՉ. Յակոբ։ Նկարիչ Սիմէոն կրօնաւոր քահանայ «ծաղկող և կազմող». «և կատարեցաւ նաղաշութի՜ սորայ ի մեծ դաստակերտն Աստապատ կոչեցեալ»։ ՏԵՂ. «Ի մայրաքաղաքիս, որ կոչի Նախիջևան, մեծ Նահապետին Նոյի շինեալ ձեռամբ տունս իւր»։ ԺԱՄԱՆԱԿ. 1304? կամ 1306 Փրկչական. Յիշատակարանից 355բ—356ա. «Արդ վերաւարտել եղև սայ ի թուաբերութե՞ս ըստ յաբեթական տումարիս հրնգէտասան յոբելենիս, յաւելեալ եաւկի թուով. և ի յելանելն նախատեղծին ի վաելչութ՞ե (այսպէս) վայրէն և ի ծաղկազարդ բուրաստանէն մինչև ցսոյն ամ յարաբարդին միահամուռ միանգամայն ամք իբրև ՉՌ և Զ յաւելեալ քառակի թուով։ Եւ ի կենարար յայտնութ՜էն ա՜յն բանի մինչև ցսոյն ամ շարամանեալ պարփակին ամք իբրև ՌՅ և Զ. Յորում և

*